## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2016 թվականի N 60-Ա**

### «ՍԻՍԻԱՆԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ /ՕԺԱՆԴԱԿ/ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 34-րդ կետով և համաձայն <<Սիսիանի թիվ 1հատուկ /օժանդակ/ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2016 թվականի հուլիսի 12-ի նիստի N 64 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել <<Սիսիանի թիվ 1հատուկ /օժանդակ/ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Հերմինե Դավթյանի ընտրության արդյունքները:

2.Կազմակերպության ընտրված տնօրեն Հերմինե Դավթյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով ազատելով նրան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

3.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** *Ս. Խաչ...* ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2016թ.հուլիսի 14*
*ք. Կապան*